Իրավաբանական անձի գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն, ինչպես նաև ՀԳՄ-ի կողմից մատուցվող համապատասխանության գնահատման ծառայությունների նկարագիրը

«ԱՐՄՍԵՐՏ» ՍՊ ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ (Իրավաբանական անձի պետական գրանցման վկայական՝ 03Ա1041838, գրանցման համարը 264.110.891838, գրանցման ամսաթիվը 14.03.2016թ.):

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար - Տնօրեն՝ Արման Վահանի Աբրահամյան:

Ընկերության գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Ն. Տիգրանյան 10/42:

Ընկերությունն իր գործունեությունը սկսել է 2016 թվականից:

Ընկերության կազմում գործում են փորձարկման լաբորատորիա և արտադրանքի սերտիֆիկացման մարմին, որտեղ իրականացվում են էլեկտրական, ռադիոէլեկտրական սարքավորումների, մալուխների փորձարկումներ, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման՝ սերտիֆիկացման և համապատասխանության հայտարարագրերի գրանցման աշխատանքներ:

Իր գործունեության իրականացման համար Ընկերությունն ապահովված է, ամերիկյան, ճապոնական, ռուսական, չինական և ինքնաշեն սարքավորումներով ու չափման միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս փորձարկումների արդյունքում ստանալ ճշգրիտ տվյալներ և դրանք կիրառել արտադրանքի սերտիֆիկացման մարմնի աշխատանքներում:

Փորձարկման լաբորատորիան իր աշխատանքներն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի, ազգային և միջպետական ստանդարտների ու տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

Փորձարկման լաբորատորիան իր գործունեությունն իրականացնում է ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ 5-րդ փողոց, 47 հասցեում:

«ԱՐՄՍԵՐՏ» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Աբրահամյան